

† ՄԱԿԳՈՅԺ

ԱՌԱՔԵԼ ԽԱՏՈՒՐԵԱՆ

Երևանի նահանգի Արզաքեանդ կալուածքում այս օրերա ողբերգական մահով վերջ դրուեց մի անհատի կեանքի, որ իւր երկարամեայ հասարակական գործունէութեամբ գրաւել էր շատերի մանաւանդ գաղտնի բարեգործութեամբ գրաւել էր շատերի սէրն ու յարդանքը: Մեր ո՞ր բարեգործական ընկերութիւնը, ո՞ր լրագիրը, ո՞ր չքաւոր հեղինակը նպաստ չէ ստացել հանգուցալ Առաքել Ծատուրեանից: Իւր բարեգործութեամբ, առա տաձեռնութեամբ, հասարակական ինդիրների հետաքրքրութեամբ հանգուցեալը վայելում էր հայ ժողովրդի համակրանքը. ամենքը ճանաշում էին նրան ու անուանում Առաքել «ապէր»: Առաքել ապէրը ժողովրդական մարդ էր Բագւում և մասամբ նաև Թիֆլիսում: Իւր ազգին, արենակից ժողովրդի ցաւերին օգնելու ձգտումն այնքան մեծ էր այդ թէս անուա, բայց բնական խելքով մարդու մէջ, որ նոյն իսկ իւր անձը վտանգի ենթարկելով՝ հայկական ինդիրի տաք ժամանակը գնաց Լօնդօն և անգլիական բարձր շրջանների մէջ հայի վշտերն էր պատմում և օգնութիւն հայցում:

Հանգուցեալը Սիւնեաց աշխարհի Քարահունջ գիւղի զաւակ էր և Բագու գաղթած. Բագւում բաղդը ժպտում է գիւղի բնութեան որդուն և գիւղացի երիտասարդը հետզհետէ կարողութիւն է ձեռք բերում. սակայն ուրիշների նման նաշէ վատնում բաղդի բերածը իւր անձնական վայելութիւնների համար միայն, այլ լաւ ըմբռնելով կարիքի և չբաւորութեան նշանակութիւնը՝ օգնութեան ձեռք է կարկառում իրեն դիմող և շդիմող կարօտեալներին:

Հանգուցեալը հաստարակել է նաև (առանց իր անունը յայտնելու) մեծածախ և հասարակական նշանակութիւն ունեցող պարունակութեամբ գրքեր. օգնել է իրեն դիմող գրագէտ. ներին նիւթապէս և մտադիր էր իւր ամբողջ հարստութիւնը հաստարական բարեգործական նպատակի յատկացնելու. ինքն անզաւակ և ամուրի էր մնացել: Սակայն տարրաբաղդաբար վերջին մի քանի տարիների ընթացքում հանգուցեալի դրամական գործերը ձախ գնացին և Բագուի ընդհանուր «կրիզիս»ից

բացառութիւն չկազմեցին նաև Առաքել ապօր խոշոր ձեռնարկութիւնները: Հանգուցեալը կամենալով ուրիշ կերպ ևս օգնած լինել երկրագործ ժողովրդին, մի քանի խոշոր կալուածքներ ձեռք բերեց և մտադիր էր ծաղկած դրութեան հասցնել այդ հողերը գիւղատնտեսական կատարելագործուած միջոցներով: Վերջին գործում բաղդը դաւաճանեց Մատուրեանին. նա իւր նպատակն իրագործուած չկարողացաւ տեսնել և յաւիտեանս աչքերը փակեց: Իրամատկան տաղնապը, ինչպէս երևում է, վերջերը նրան սաստիկ յուղել և յուսահատութեան էր հասցընել. հոգեկան այդ անհանգիստ դրութիւնն արդէն այն սատիճանին էր հասել, որ իր քառասնամեայ թուրք բարեկամ Թաղիեկի օրինակելի և իսկ քրիստոնէական ընկերական օգնութիւնն էլ չկարողացաւ կասեցնել նրան ճակատագրական բայլից: Հանգուցեալը մօտ 75 ամեայ առոյդ ծերունի էր և դեռ կարող էր երկար ապրել:

Կովկասի ամբողջ մամուլը համակրանքով լի խօսքեր նուիրեց հանգուցեալի յիշատակին: Մենք էլ մեր սրտագին ծանր վիշտը միացնում ենք մարդասէր «ապօր» մերձականների սրտի կսկծին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:
